
ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ. Բարոյախաւս. հունարեն և հայերեն տարբերակները թարգմանական տեխնիկայի ուսումնասիրությամբ, Եբրայական համալսարանի հայագիտական ուսումնասիրություններ, հ. 6, *Լուվեն-Փարիզ-Դաղլի, Մասաչուսեթս, «Պետերս» հրատ., 2005, 216 էջ:*

GOHAR MURADYAN. *Physiologus. The Greek and Armenian Versions with a Study of Translation Technique, Hebrew University Armenian Studies 6, Leuven-Paris-Dudley, Massachusetts, Peeters, 2005, 216 p.*

*Physiologus («Բարոյախաւս») ժողովածուն նվիրված է իրական կամ երևակայական կենդանիների, բույսերի և քարերի որոշակի հատկանիշների նկարագրությանն ու սիմվոլիկ մեկնաբանմանը, որ տիպաբանական գուգահեռներ է անցկացնում դրանց և Քրիստոսի, Երրորդության, Եկեղեցու, Մատանայի կամ մարդկանց միջև: Այն գրվել է հունարեն, մ. թ. II–IV դարերի միջև. միջնադարում այն թարգմանվել է բազմաթիվ լեզուների, նաև՝ հայերենի: Հունարեն բնագիրը մեզ է հասել երեք խմբագրությամբ, որոնցից հնագույնը, այսպես կոչված, *Physiologus antiquissimus*-ը, պահպանվել է չորս ձեռագրախմբերով: Սրանց թվում է Մոսկվայի ձեռագիրը՝ II (XI դ.), որի տեքստը սերտորեն առնչվում է ամենահին խմբագրության № 4 ձեռագրախմբին. վաղուց նշվել է, որ այն հայերեն «Բարոյախաւս»-ի հնագույն խմբագրությանն ամենից մոտ բնագիրն է:*

Գրախոսվող գիրքն սկսվում է հայերեն խմբագրությունների՝ Գոհար Մուրադյանի բանասիրական ու լեզվաբանական ուսումնասիրությամբ: Առաջաբանին հաջորդում են հայերեն հնագույն խմբագրության հրատարակությունը՝ հունարեն II ձեռագրի տեքստի գուգադրմամբ, և հայերեն տեքստի անգլերեն թարգմանությունը: Ծանոթագրություններում նշվում են նաև հունարենի համեմատ տարբերությունները: «Հավելվածներն» ընդգրկում են հայերեն համառոտ խմբագրությունը (C, տե՛ս ստորև), հունարեն II ձեռագրում առկա, բայց հայերենում բացակայող գլուխներ և միայն հայերեն տարբեր խմբագրություններում առկա

գլուխների երկու շարք: Այդ բոլոր տեքստերը, բացի հայերեն C խմբագրությունից, ներկայացված են նաև անգլերեն թարգմանությամբ:

Հայերենը պահպանվել է երեք խմբագրությամբ՝ TR տառանիշով նշված բուն թարգմանությունը, որը, ինչպես արդեն ասվեց, ճշգրիտ համապատասխանում է հունարեն II ձեռագրում պահպանված տեքստին, մի համառոտված խմբագրություն (P) և համառոտ C խմբագրությունը երկու ենթախմբագրություններով, որոնցից մեկը սերում է մյուսից:

Գ. Մուրադյանի ներկայացրած տեքստը հայերեն TR խմբագրության «վերանայված դիպլոմատիկ» հրատարակություն է. դրա հիմքում Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2101 ձեռագիրն է (1223 թ.), որին գուգահեռ բերվում է հունարեն II ձեռագրի տեքստը: Այն դեպքերում, երբ Մատենադարանի 2101-ը և հունարեն II-ն տարբերվում են միմյանցից, և տարբերությունները հաստատվում են մյուս լեզվով այլ ձեռագր(եր)ի ընթերցումներով, հրատարակիչը դրանք ներմուծում է տեքստի մեջ: Գրքի առաջաբանում ներկայացված են հայերեն խմբագրությունները, այնուհետև բերվում է դրանք պարունակող ձեռագրերի մանրամասն նկարագրությունը, որին հաջորդում է տարբեր խմբագրությունների, ինչպես նաև հայերեն ու հունարեն տարբերակների մանրագնին համեմատությունը. կան նաև թարգմանության մեթոդին և հայերեն տեքստի լեզվական առանձնահատկություններին վերաբերող նկատառումներ: Թարգմանությունը բնորոշվում է որպես շատ ճշգրիտ, բայց և տառացիության ցածր աստիճանով, ինչը կարող է վկայել, որ այն կատարվել է V

¹ Մոսկվա, Սինոդի գրադարան, ձեռ. № 432:

դ.: Թարգմանիչը երբեմն լրացուցիչ բառեր է ներմուծում, հատկապես հունարեն այս կամ այն տառադարձված բառը (սովորաբար դրանք կենդանիների կամ բույսերի անուններ են) բացատրելու համար: Բացի այդ, չնայած որոշ բարդ բառեր բառացի են թարգմանված, դրանց մեծամասնության թարգմանությունը բառացի չէ: Հունարեն $\epsilon\chi\omega$ բայը սովորաբար թարգմանված է ոչ թե ունիմ, այլ եմ կամ գոմ բայով և պատկանելության սեռականով կամ տրականով: Այս առթիվ նկատենք, որ էջ 64-ում հիշատակված օրինակն իրականում ոչ թե «§3.6-ից է, այլ «§13.5-ից»:

Վերադառնանք թարգմանության մեթոդին. Գ. Մուրադյանն անդրադառնում է հունարեն մեկ բառի (գոյական, ածական, բայ) թարգմանությունը երկու բառով (hendiadys) և քննարկում շարահյուսական առանձնահատկություններ: Հունարեն բնագրում հանդիպող ոչ «բացարձակ սեռական», ոչ էլ «հայցական հոլովն անորոշ դերբայի հետ» դարձվածները բառացի չեն թարգմանված, իսկ հունարեն դերբայական դարձվածների մեծ մասը թարգմանված է հարաբերական, համադաս, ժամանակի կամ պատճառի պարագա երկրորդական նախադասություններով: Այս մանրակրկիտ վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ թարգմանությունը դասական լեզվով է, և ոչ հունարան: Առաջաբանի հաջորդ բաժնում քննարկվում են «Բարոյախաւս»-ի հետքերը հայ միջնադարյան գրականության մեջ. ի թիվս այլոց՝ Եզնիկի «Եղծ աղանդոց»-ի, Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց»-ի մաս կազմող Գրիգորի Վարդապետության, Եղիշեի «Մեկնություն արարածոց գրոց»-ի և այլ, ավելի ուշ հայ հեղինակների հետ նմանություններ: Հիմնվելով թարգմանության լեզվի, նաև այն ենթադրության վրա, որ «Բարոյախաւս»-ի հետքեր կարելի է գտնել հայ վաղադույն հեղինակների մոտ, այլև թարգմանության մեջ հայկական և եգիպտական տոմարների զուգահեռ հիշատակությունից բխող մի չափազանց հետաքրքրական կովանի վրա, Գ. Մուրադյանը եզրակացնում է, որ թարգմանությունը պետք է թվագրել 476 թվականից առաջ (տե՛ս էջ 81-84):

«Բարոյախաւս»-ից իրական կամ ենթադրյալ մեջբերումները V դ. հայ հեղինակների մոտ ակնհայտորեն շատ կարևոր են թարգմանության ժամանակը որոշելու համար, և ուստի արժե դրանց անդրադառնալ: Թերևս կարելի է առանձին դեպքերում չհա-

մաձայնել Գ. Մուրադյանի հետ՝ այս կամ այն հատվածը V դ. որևէ տեքստի աղբյուր համարելու կապակցությամբ, սակայն նրա գրքում հավաքված բոլոր հնարավոր նմանությունների ամբողջությունը, որոնց մի մասը հեղինակն ինքն է առաջին անգամ ներկայացրել, լավագույն հիմք է հետագա քննարկման համար, որին մենք ուզում ենք մասնակցել՝ սահմանափակվելով Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում «Բարոյախաւս»-ի ենթադրյալ հետքերով: Եզնիկի երկի երկու հատված, թվում է, նման են «Բարոյախաւս»-ին: Առաջինը վերաբերում է մրջյունի մի սովորությանը. այս զուգահեռը նկատել էին ռեռ Ն. Մառը և ապա Լ. Խաչիկյանը, ինչպես Գ. Մուրադյանը նշում է էջ 6-ում և 73-ում: Նա, սակայն, նաև նկատում է, որ Եզնիկի և «Բարոյախաւս»-ի համապատասխան հատվածների միջև գուտ բնագրային նմանություն չկա: Գ. Մուրադյանի հետ համաձայնելով հանդերձ՝ կարևոր ենք համարում այս հատվածի վրա փոքր-ինչ ավելի մանրամասն կանգ առնել, քանի որ այն կարող է հիմնական կովանը համարվել հոգուտ Եզնիկի՝ «Բարոյախաւս»-ին ծանոթ լինելու ենթադրության: Սկսենք «Բարոյախաւս»-ի 15.6 և Եզնիկի II, 18 («§250 ըստ Մարիեսի հրատարակության»² հատվածների համեմատությունից. «Բարոյախաւս». «Երկրորդ բարք մրջմանն. յորժամ համբարեսցէ զհատսն յորջսն, ընդ մէջ կտրէ, թէ զուցէ ձմեռն գայ, եւ անձրեք լինին, եւ բուսանին հատքն, եւ սովամահ լինիցին»: Եզնիկ. «Որպէս եւ մրջեան [ազդուներ բնականք]՝ յամարանոյն պատրաստելոյ զկերակուր, եւ ընդ երկու զհատն կտրելոյ՝ զի մի բուսանիցի, եւ ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն յորջէ անտի եւ ցամակեցուցանելոյ»:

Ինչպես ասացինք, Եզնիկի և «Բարոյախաւս»-ի համապատասխան հատվածների միջև գուտ բնագրային նմանություն չկա: Ուստի, եթե ընդունենք, որ Եզնիկի հատվածը ծագում է «Բարոյախաւս»-ից, կարելի կլինեն նաև ենթադրել, որ Եզնիկին այն ծանոթ էր հունարեն բնագրով և ոչ հայերեն թարգմանությամբ: Հետևաբար, մեջբերումը կկորցնեն իր արժեքը որպես թարգմանությունը թվագրելու կովան: Սակայն, առնվազն այս հատվածի հիման վրա, կարելի է

² Մատենագիրք հայոց, Ե դար, հ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 478: V դ. հայ հեղինակների երկերից մեջբերումներում մենք փոքրիկ ճշգրտումներ ենք արել:

բացատրել, որ Եզնիկը ծանոթ էր «Բարոյախաւս»-ին: Եթէ ամփոփելու լինենք երկու տարբերակների բովանդակությունը, կարող ենք ասել, որ, ըստ «Բարոյախաւս»-ի, մրջյունը

1. կտրում է հատիկն այն պահեստավորելիս,

2. այլապես ձմռանն այն կարող է անձրևի հետևանքով ծլել,

3. ծլած, ոչ ուտելի հատիկները կհանգեցնեն սովամահության:

Ըստ Եզնիկի՝ մրջյունը

1. ամռանն իր համար կերակուր է պատրաստում,

2. նա կտրում է հատիկը, որպեսզի այն չծլի,

3. տաք եղանակին նա հատիկը չորացնելու համար այն բնից դուրս է հանում:

Երկու մեջբերումներում ընդհանուր է լույս այն, որ մրջյունը կտրում է հատիկը: «Եղծ աղանդոց»-ի այս հատվածի մեկ այլ հնարավոր աղբյուր է մատնանշել Ն. Ադոնցը³. հատված Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցարեայ արարչութեան» երկից (9-րդ ձևով), որը թարգմանվել է հայերեն: Ահա այդ հատվածը՝ ըստ Կ. Մուրադյանի հրատարակությամբ⁴.

«Եւ նմանեցոյք գոնեայ մրջեան, որ ամարանոյ պատրաստէ զհամբարս ձմերանոյ [...] Չհատ կամ զկորիզ իրիք յորժամ տանի ի ծակն, ընդ մէջ կտրէ եւ դնէ, զի մի՛ բուսանիցին ի հիւթոյ խոնաւութեան, եւ վրիպեալ ելանիցեն ի դերեւս պիտոյից կերակրոց: Եւ դարձեալ եթէ խոնաւեցին հատքն, հանէ առ եզեր մրջիւնոցին, արկանէ տարածոց եւ ցամաքեցուցանէ: Բայց ոչ եթէ հանապազ հանէ, այլ յորժամ գիտէ, թէ արեւկայ եւ պարզ իցեն⁵, եւ ոչ անձրեւ, եւ ոչ վայրապար

առնէ ընդ ժամանակս, յորում հանէ մրջիւնն զցորեանն ի շտեմարանաց իւրոց ցամաքեցուցանել»:

Մրջյունն, ըստ Բարսեղի՝

1. ամռանն իր կերակուրն է պատրաստում ձմռան համար,

2. այն պահեստավորելիս՝ կտրում է հատիկները, որպեսզի դրանք խոնավությունից չծլեն, այլապես նա կգրկվի սննդից,

3. եթէ հատիկները խոնավանում են, մրջյունը հանում է դրանք իր բնի մոտ չորացնելու, բայց միայն արևոտ եղանակին:

Թվում է՝ Եզնիկի հաղորդած բոլոր տեղեկություններն առկա են Բարսեղի երկում. ամառային աշխատանքը, հատիկները կտրելը, դրանք արևին դնելը: Ճիշտ է, Բարսեղի մոտ այլ տեղեկություններ էլ կան, սակայն դա չի բացատրում, որ Եզնիկի աղբյուրն առավել հավանականությամբ Բարսեղն էր, ոչ թե «Բարոյախաւս»-ը:

Եզնիկի երկի մեկ այլ հատված, որ կարող է նման թվալ «Բարոյախաւս»-ին, I, 24-ն է (Մարիեսի հրատարակության «§122): Համաձայն Գ. Մուրադյանի (էջ 75, տե՛ս նաև էջ 60, ծան. 93)՝ այս հատվածում Եզնիկը յուշկապարիկ բառն օգտագործել է որպես հունարեն *σειρήν*-ի համարժեք (վերջինս Աստվածաշնչում թարգմանված է համբարու. Եսայի 13.21-22, 34.13-14), իսկ իշացուլ բառը՝ որպես հուն. *ὄνοκέινταυρο*-ի համարժեք. նույն գուգահեռներն առկա են Բարոյախաւս-ի 16-րդ գլխում:

Մեր կարծիքով՝ Եզնիկի հատվածում բառերի իմաստն այլ է. Եզնիկն ուզում է ցույց տալ, որ նման արարածներ երբեք գոյություն չեն ունեցել, որ դրանք սոսկ անուններ են: Փաստորեն, դրանք հիշատակվում են Աստվածաշնչում, բայց ըստ նրա՝ «թեպետ եւ ասին ինչ անուանք ի Գրոց յուշկապարկաց կամ համբարուաց կամ պարկաց, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին, եւ ոչ ըստ բնութեան» և՛ «Գրոց ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ [...] գյուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն, գոր յոյն լեզու «իշացուլ» ասէ: Արդ ցուցեն, թէ գտանիցին իշացուլք ի Բաբելոնի: Ապա ուրեմն յայտ է՝ եթէ անուանք առանց անձանց են յուշկապարկաց եւ իշացուլք»⁶:

Եզնիկը հստակորեն ակնարկում է Եսայու այս հատվածները, որտեղ ասվում է, թէ,

³ Ն. Ադոնց, Քննական նշմարներ Եզնիկի մասին (Լ. Մարիեսի աշխատության առթիւ)։ «Բազմավեպ», № 83 (1926), էջ 71:

⁴ Բարսեղ Կեսարացի. Յաղագս վեցարեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984, էջ 299-300: Հունարեն տեքստը (IX,3,9-10) փոքր-ինչ տարբեր է, սակայն այն նույնպես պարունակում է Եզնիկի մոտ առկա մանրամասները (տե՛ս Basilio di Cesarea. Sulla Genesi (Omellie sull'Esamerone). A cura di M. Naldini, Milano, 1990, p. 280):

⁵ Թաղեոս Թոռնյանն առաջարկել է իցեն-ից հետո ավելացնել աղբ բառը (տե՛ս Թ. Թոռնյան. Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց երկրորդ, երրորդ եւ չորրորդ դարուց,

հանդերձ ծանոթութեամբ, հ. Բ հատոր, Վիեննա, 1910, էջ 87):

⁶ Մատենագիրք հայոց, հ. Ա, էջ 458:

ենթադրաբար, համբարուք (σειρήνες) և յուշկապարիկք (ὀνοκένταυροι) բնակվում են Բաբելոնի ավերակներում: Նա պարզապես կրկնում է սա առաջին հատվածի սկզբում՝ միայն ավելացնելով պարիկք. վերջիններս, որքան մեզ հայտնի է, Աստվածաշնչում չեն հիշատակվում: Եզնիկը, փաստորեն, ի նկատի ունի այդ բառերի աստվածաշնչային իմաստները: Այնուհետև նրա ուշադրությունը կենտրոնանում է յուշկապարիկ-ների վրա, և նա ավելացնում է դրանց հունարեն անվան կիսաստառացի թարգմանությունը՝ իշացուլ: Վերջում Եզնիկն ասում է, որ այսպիսի արարածներ՝ այսինքն օնոկենտավրոսներ, գոյություն չունեն, ինչպես էլ դրանց կոչենք՝ յուշկապարիկ, ինչպես դա անում են հայերը, թե իշացուլ, ինչպես այն կոչում են հույները:

Ամփոփելով նշենք, որ Եզնիկի խնդրո առարկա հատվածում յուշկապարիկ-ը չի նշանակում սիրեն, իսկ իշացուլ-ը՝ օնոկենտավրոս: Ընդհակառակը՝ առաջինն է նշանակում օնոկենտավրոս, ինչպես Աստվածաշնչում է, իսկ երկրորդը պարզապես առաջինի հունարեն համարժեքի թարգմանությունն է: Բացի այդ, իշացուլ բառն առկա է ոչ միայն Եզնիկի գրքում ու «Բարոյախաւս»-ում, այլև Հովհան Ոսկերարանի մոտ ու Եվսեբիոսի «Ժամանակագրության» մեջ⁷: Եթե այդպես է, ուրեմն «Բարոյախաւս»-ի ոչ հունարեն սկզբնագիրը, ոչ էլ հայերեն թարգմանությունը չպետք է դիտվեն որպես Եզնիկի աղբյուր:

Անդրադառնանք հայերեն բնագրին: Քանի որ գործ ունենք «կիսադիպլոմատիկ» հրատարակության հետ, ուստի արդարացված են որոշ ոչ դասական ուղղագրական ձևեր, որոնք ունեն որոշակի հնչյունաբանական կամ ձևաբանական բացատրություն, ինչպես օրինակ՝ ըմբէ փիւ. ըմպէ (էջ 91, «§3.4, տե՛ս նաև էջ 128, «§24.4), կա փիւ. կայ (էջ 91, «§3.6), երթա փիւ. երթայ (էջ 93, «§5.3), վերա փիւ. վերայ (էջ 115, «§17.5), զաչք փիւ. զաչս (էջ 95, «§6.2), զարոյ փիւ. զարույ (էջ 112, «§15.12), կղոյ փիւ. կղույ (էջ 120, «§20.3), հովանոյն փիւ. հովանոյն (էջ 133, «§30.4) և այլն: Հավանաբար, նման օրինակ պետք է համարել նաև աղանիքն (բնակէ ա-

ղանիքն բառակապակցության մեջ, էջ 134, «§30.5), որ եզակի թվի իմաստ ունի:

Տեղ են գտել նաև մի քանի վրիպակներ, ինչպես՝ ցաւնքն փիւ. ցաւքն (էջ 95, «§6.6»⁸), միագամայն փիւ. միանգամայն (էջ 96, «§6.7»), գ փիւ. ք (էջ 111, «§15.6»), կիտեն փիւ. կիտեն (էջ 122, «§20.12»): Անգլերեն թարգմանության մեջ առկա է *increas* բառը՝ փիւ. *increase* (էջ 148, «§12.4»), իսկ գրականության ցան կում՝ գերմաներեն *ertsen* փիւ. *ersten* (էջ 214): Մրանք աննշան վրիպակներ են, որոնք ցանկացած ընթերցող կարող է ուղղել: Ավելի էական բացթողումները հետևյալն են. «19.11-ի (էջ 153) անգլերեն թարգմանության մեջ մի բառ է պակասում (երկայնմտութիւն բառը թարգմանված չէ, և նախադասությունը կիսատ է մնում. "unanimity and"): Ներածության մեջ, էջ 60, տողատակի 93 ծանոթագրության մեջ վկայակոչված է BONATI & BERNARDELLI-ի մի աշխատություն, որը, սակայն, նշված չէ գրականության ցանկում, որտեղ բերվում են ամբողջական տվյալները: Իհարկե, օգտակար է գրականության ցանկում հայերեն և ռուսերեն վերնագրերը ինչպես բնագրի լեզվով, այնպես էլ թարգմանաբար ներկայացները, սակայն ինչու՞ վրացերեն աշխատությունները հղված են միայն թարգմանաբար: Նույնը պետք է ասել «Պատմա-բանասիրական հանդեսի» մասին (այն հիշատակված է միայն որպես *Historico-Philological Journal*, էջ 215), մինչդեռ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի միայն հայերեն վերնագիրն է նշվում (էջ 212): Նաև «Մատենագիրք հայոց» շարքն է հղվում սույլ որպես *Armenian Classical Authors* (էջ 211): Միայն թարգմանաբար ներկայացված վերնագրերը չեն դուրացնում ընթերցողի գործն այդ աշխատությունները փնտրելիս, նույնիսկ եթե խնդրո առարկա երկն ունի լրացուցիչ այլալեզու վերնագիր:

⁸ Եթե ցաւնք-ը չհամարենք հետդասական հայերենում բառի մեջ լրացուցիչ հնչյունի ներմուծման դեպք. օրինակ՝ մենք < մեք, արտասունք/արցունք < արտասուք: Այս մասին տե՛ս J. K a r s t. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901 (reprint Berlin, 1970), «146. p. 104 և չ. Գ. Մ ո լ ը ա ղ յ ա ն. Հնչյունաբանություն («§86, «Հնչյունների հավելում»)– Աղանիքներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 153–155: Եթե այդպես է, ցաւնքն պետք է նշվի հայերեն ձևագրի ոչ դասական ձևերի թվում:

⁷ Տե՛ս Գ. Ա լ է տ ի ք է ա ն, Խ. Մ ի լ ը մ է - լ է ա ն, Մ. Ա լ զ է ր է ա ն. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836 (վերահրատ.՝ Երևան, 1979), էջ 864:

Հրատարակված բնագրի մասին երկար ասելիք չունենք. այն շատ լավ է պատրաստված: Միայն կցանկանայինք նշել, որ «§2.2-ում (էջ 87-88), որտեղ հունարենն ունի *εὐλογῶν... ἔλεγεν*, հրատարակիչը նախընտրել է արհնէր... և ասէր տարընթերցումը, որ վկայված է միայն Երուսաղեմի №2531 ձեռագրում, մինչդեռ Մատենադարանի №2101 և երկու այլ ձեռագրերում ունենք ասէ փխ. ասէր. Հայտնի է, որ ներկա ժամանակով ասէ-ի գործածությունն անցյալ բայաձևերի հետ սովորական էր հին հայերենում, այնպես որ արհնէր... և ասէ տարընթերցումը պետք էր դիտել որպես հունարենի շատ ճշգրիտ թարգմանություն և այն նախընտրելի համարել: Ի դեպ, նման մի դեպք կա «§6.16-ում (էջ 97)՝ վկայեաց... և ասէ:

Վերջին հարցը, որ ուզում ենք քննարկել, «18.2-ում (էջ 116) առկա խորհրդավոր ջղոջ - բառն է. *ζῆτει ὄπου ἐστὶν τέλιμη* - × երթայ գտանէ ջղոջ ինչ տեղի»: Այն հակասում է դասական հայերենի ուղղագրության կանոններին, ինչը կարելի է ասել նաև ջղոջ տարբերակի մասին, որ ջղոջ-ի կողքին առաջարկում են Նոր հայկազյան բառարանն ու Մ. Ջախջախյանի «Հայ-իտալերեն բառարանը»⁹. Երկուսն էլ բացատրում են բառը որպես գիճիճ, տղմուտ: Ջախջախյանը հստակ նշում է, որ այն ածական է: Հավանաբար, բառին ավելի ընդունելի ձև հաղորդելու նպատակով «Առձեռն բառարանն» առաջարկում է ուղղել այն՝ «թերևս ջիղջ կամ ջուղջ»¹⁰: Ամեն դեպքում, բառի այս ձևի կիրառությունը եզակի է (*hapax legomenon*), ինչպես փաստում են և՛ Նոր հայկազյան բառարանը, և՛ Աճառյանի «Արմատական բառարանը»¹¹: Վերջինս իր հերթին առաջարկում է ուղղել բառը «ճիճիճ»՝ բացատրելով այն որպես «ճահիճ, եղտիւր, կանգնած ցեխոտ ջուր», որ երկու անգամ արձանագրված է Երեսիա Մեղրեցու խմբագրած «Բարձրիք հայոց»-ում (XVII դ.

վերջ): Փաստորեն, Հ. Ամայյանի հրատարակած այդ բառարանի մեջ¹² գտնում ենք՝ «ճիճիճ - վատ տիղմ, կամ խոհերեց [= խոհերանոց, տե՛ս Ամայյանի մեկնաբանությունը, էջ 403], կամ եղտիւր, կամ ցիխ» (էջ 202) և՛ «ճահիճ - ժողով ջուրոց, կամ կացուն ջուր, կամ ճիճիճ, կամ գետք» (էջ 198): Այս վերջին բացատրությունը մեջբերված է նաև «Միջին հայերենի բառարանում»¹³: «Բարոյախաւս»-ի մեկ այլ գլխում գտնում ենք նման մի նախադասություն («28.4, էջ 132). «թաւալի ի տիղմ տեղի»: Իսկ համառոտ խմբագրության մեջ հատվածը դարձել է «երթայ թաւալի ի ցեխն» («§18.1-2, էջ 179): Ուրբան մեզ հայտնի է, ջղոջ բառի որևէ ընդունելի ստուգաբանություն չի առաջարկվել, այնպես որ հնարավոր չէ ճշտել բառի ձևը¹⁴: Այսպիսով, եթե ջղոջ բառը չենք փոխարինում մեկ այլ բառով (օրինակ՝ տիղմ, ցեխ/ցիխ), քանի որ դրա համար բանասիրական հիմնավորում չունենք, ուրեմն «18.2-ի նախա-

¹² Բարձրիք Հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամայյանի, Երևան, 1975:

¹³ Ռ. Մ. Ղ ա զ ա թ յ ա ն, Հ. Մ. Ա վ է տ ի ս - յ ա ն. Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, 1992, էջ 89:

¹⁴ Ն. Մառի՝ «Բարոյախաւսի» երկու հրատարակություններում էլ արձանագրված է ջղոջին ընթերցումը. տե՛ս Н. М а р р. Сборники притч Вардана. Материалы для истории средневековой армянской литературы. Т. 3, СПб., 1899, с. 156; Н. М а р р. Физиолог. Армяно-грузинский извод (Тексты *մեկնաբանության: Թերևս, պետք է «հուսահատության խաչով»* (*crux desperationis* †) նշել ջղոջ բառը հայերեն «Բարոյախաւս»-ում:

Չնայած աշխատությունը վերաբերում է «Բարոյախաւս»-ի հայերեն խմբագրություններին, գիրքը, անշուշտ, կարող է օգտակար լինել նաև հունական գրականությունն ուսումնասիրող բանասերներին:

Ավարտելով մեր գրախոսությունը՝ Գոհար Մուրադյանին շնորհավորում ենք այս հույժ արժեքավոր հրատարակության առիթով: Ուզում ենք նաև հույս հայտնել, որ նրա աշխատանքը հիմք կդառնա «Բարոյախաւս» հետաքրքրական ժողովածուի հին հայերեն թարգմանության հետագա ուսումնասիրության համարի разыскаания по армяно-грузинской филологии. Кн. 6), СПб., 1904, с. 23.8, Մառի ստուգաբանությունը (տե՛ս նույն տեղում, էջ XXI) առարկել է Աճառյանը (Հայերեն արմատական բառարան, հ. Գ, էջ 206):

⁹ Նոր բարձրիք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837 (վերահրատ.՝ Երևան, 1981), էջ 674, Մ. Ջ ա թ յ ա ն յ ա ն. Բարձրիք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837, էջ 1219: ՆԲՀԼ-ն մեջբերում է նույն նախադասությունը փոքր-ինչ տարբեր ձևով. «որննէ ջղոջ ինչ տեղի», և ավելացնում է տարընթերցում մեկ այլ ձեռագրից. «տեղի ինչ տիղմն»:

¹⁰ [Մ. Ալգերեան], Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, II հրատ., էջ 706:

¹¹ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 206:

դասությունը կարելի է կարդալ որպես «եր-
թայ գտանէ ջղջի<ւ> (կամ ճղճի<ւ>) տեղի»:

Վստահ չենք, որ սա լավ ուղղում է, բայց,
հաշվի առնելով ջղջ բառի արտասովոր

բնույթը, մտածեցինք, որ այն արժանի է ո-
րոշ:

ԱԼԵՍԱՆԴՐՈ ՕՐԵՆԳՈ (Իտալիա)
ԱՆԳԼԵՐԵՆԻՅ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆԸ